ՀՈՎՍԵՓԻ ԿՅԱՆՔԸ. ՀԱՎԱՏՈՎ ՀՈՎՍԵՓԸ...

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴ. 50.15-26

*15 Եւ Յովսէփի եղբայրները տեսան որ իրենց հայրը մեռաւ, ասեցին. Գուցէ Յովսէփը ոխ ունենայ մեզ
հետ եւ հատուցի մեզ բոլոր չարիքների համար, որ մենք արինք իրեն: 16 Նրանք պատգամավոր
ուղարկեցին Հովսեփի մոտ՝ ասելով. Քո հայրը մեռնելուց առաջ պատվիրեց և ասաց. "Այսպե՛ս
ասացեք Հովսեփին. 17 Հիմա շնո՛րհ արա քո եղբայրներին, ների՛ր նրանց հանցանքն ու մեղքը,
որովհետև քեզ չարություն արեցին. Եւ հիմա աղաչում ենք՝ ներիր քո հօր Աստուծոյ ծառաների
յանցանքը: Եւ Հովսեփը լաց եղավ իրեն ասված նրանց այս խոսքերի համար: 18 Նրա եղբայրներն էլ
գնացին, խոնարհվեցին նրա առաջ և ասացին. Ահա մենք քո ծառաներն ենք: 19 Եւ Յովսէփն ասեց
նորանց. Հովսեփն ասաց նրանց. Մի՛ վախեցեք, մի՞թե ես Աստծու փոխանորդն եմ: 20 Թեպետ դուք
խորհեցիք իմ դեմ չարիք գործել, բայց Աստված խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ
եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ: 21 Եվ հիմա մի՛ վախեցեք, ես կկերակրեմ ձեզ ու
ձեր երեխաներինե: Եվ մխիթարեց նրանց ու քաղցրությամբ խոսեց:*

*22 Հովսեփը բնակվեց Եգիպտոսում, ինքը և իր հոր տունը: Նա ապրեց հարյուր տասը տարի: 23
Հովսեփը տեսավ Եփրեմի որդիների մինչև երրորդ սերունդը: Մանասեի որդի Մաքիրի որդիներն էլ
ծնվեցին Հովսեփի ծնկներին: 24 Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին. Ահա ես մեռնում եմ. Աստված
անպայման կայցելի ձեզ, կհանի ձեզ այս երկրից և կտանի այն երկիրը, որ երդվեց տալ Աբրահամին,
Իսահակին և Հակոբին: 25 Հովսեփը երդում անել տվեց Իսրայելի որդիներին՝ ասելով. Աստված
անպայման կայցելի ձեզ. իմ ոսկորներն այստեղից հանե՛ք: 26 Հովսեփը մեռավ հարյուր տասը
տարեկան հասակում: Նրան զմռսեցին ու դրեցին մի տապանի մեջ Եգիպտոսում:*

> *Հովսեփը մեռավ հարյուր տասը տարեկան հասակում: Նա վստահեցրել է իր ընտանիքին, որ նրանց վիճակված չէ հավերժ մնալ Եգիպտոսում: Աստված կայցելի նրանց և հետ կտանի Քանան: Աստված կպահի այն խոստումը, որը տվել է Աբրահամին, Իսահակին և նրանց հայր Հակոբին, որ Իսրայելին տա Քանանի երկիրը իրենց սեփական երկիր (Ծննդոց 17.5-8):*

I. ՀՈՎՍԵՓԸ ԴԵՌ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ Է, ԲԱՅՑ ՆՐԱ ՍԻՐՏԸ ՔԱՆԱՆՈՒՄ Է:

JOSEPH IS STILL IN EGYPT, BUT HIS HEART IS IN CANAAN.

*25 Հովսեփը երդում անել տվեց Իսրայելի որդիներին՝ ասելով. Աստված անպայման կայցելի
ձեզ. իմ ոսկորներն այստեղից հանե՛ք:*

Եբր. 11.22 – Հավատով Հովսեփը վախճանվելիս Իսրայելի որդիների ելքի մասին հիշեց և իր ոսկորների վերաբերյալ պատվեր տվեց:

Եբր.13.14 – որովհետև այստեղ մնայուն քաղաք չունենք, այլ հանդերձյալն ենք որոնում:

> *Հռոմ. 8.18-39 – Կարծում եմ, որ այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն համեմատվելու այն գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեր մեջ:*

- ***Հովսեփը հիանալի օրինակ է մեզանից յուրաքանչյուրի համար: Քրիստոնյաներին խոստացվել է ոչ թե ֆիզիկական Ավետյաց երկիր, այլ՝ հոգևոր Ավետյաց երկիր՝ Աստծո Թագավորությունը:***

Ա Կորնթացիներին 15.50-55 – 50 Սա եմ ուզում ասել, եղբայրնե՛ր, որ Աստծու արքայությունը մարմինն ու արյունը չեն կարող ժառանգել, ոչ էլ ապականությունն է անապականությունը ժառանգում: 51 Ահա մի խորհուրդ եմ հայտնում ձեզ. Ոչ բոլորս ենք ննջելու, բայց բոլորս ենք նորոգվելու. 52 հանկարծ, մի ակնթարթում, վերջին շեփորի հնչման ժամանակ, որովհետև շեփորը կհնչի, ու մեռելներն անապականելի հարություն կառնեն, և մենք կփոխակերպվենք:

…այդ ժամանակ կկատարվի այն խոսքը, որ գրված է. Մահը հաղթության մեջ ընկղմվեց (Ես. 25.8): 55 Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթությունը (հմմտ. Ովս. 13.14):

Փիլիպ. 3.20 - 20 Բայց մեր բնակությունը երկնքում է, այնտեղից էլ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին:

II. ԱՍՏԾՈ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ:
THE FAITHFULNESS OF GOD.

Աստված անպայման կայցելի ձեզ.

Նրան դագաղի մեջ դրեցին Եգիպտոսում: Համաձայն այս հատվածի և Եբրայեցիս 11:22-ի՝ Հովսեփին երբեք չթաղեցին: Նրա դագաղը մոտ 400 տարի մնաց գետնի վրա, մինչև այն ետ տարվեց Քանան: Այդ բոլոր տարիների ընթացքում դա լուռ վկայություն էր, որ Իսրայելը վերադառնում էր Ավետյաց երկիր, ինչպես Աստված ասաց: Նմանապես այսօր Քրիստոսով ննջածների գերեզմանը վկայում է Քրիստոսի գալուստի մասին:

- ***Հովսեփը մահացավ՝ սպասելով Իսրայելի համար Աստծո խոստման կատարմանը: Ո՞ր խոստման համաձայն:***

Ծննդոց 15.13-14 – 13 Տերն ասաց Աբրամին. Ստույգ իմացի՛ր, որ քո սերունդները պանդուխտ կլինեն մի երկրում, որ իրենցը չէ, և ծառայություն կանեն, և նրանց չորս հարյուր տարի կչարչարեն: 14 Բայց ես կդատեմ այն ազգին, որին պիտի ծառայեն, իսկ դրանից հետո նրանք մեծ ստացվածքով դուրս կգան:

- ***Այս խոստումը կատարվեց մոտ 400 տարի անց, երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից:***

Ելից 12.40-41 – Եգիպտոսում Իսրայելի որդիները բնակվեցին չորս հարյուր երեսուն տարի: Երբ չորս հարյուր երեսուն տարին լրացավ, հենց նույն օրը Տիրոջ ամբողջ ժողովուրդը ելավ Եգիպտոսի երկրից:

Ելից 13.19 – Մովսեսն իր հետ վերցրեց Հովսեփի ոսկորները, որովհետև Հովսեփն Իսրայելի որդիներին հաստատ երդում էր անել տվել՝ ասելով. ,Աստված անպատճառ կայցելի ձեզ. իմ ոսկորներն այստեղից ձեզ հետ հանե՛ք:

III. ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ:

THE PROMISES OF GOD.

- ***Աստված հավատարիմ է Իր Խոսքին՝ Աստվածաշնչին: Նրա խոստումները վստահելի են: Նա միշտ անում է այն, ինչ ասում է և միշտ պահում է իր Խոսքում տված խոստումները: Նա ոչ միայն չի ժխտի Իրեն, Նա չի կարող ուրանալ իրեն:***

2 Կոր. 1.20 – Որովհետեւ որքան Աստուծո խոստմներ որ կան՝ նրանում է այոն, եւ նրանում է ամենը Աստուծո փառքի համար մեզանով:

Եթե հավատարիմ չմնանք, նա հավատարիմ է մնում, քանի որ ինքն իրեն չի կարող ուրանալ (2 Տիմ. 2.13) – դա խոստում է:

Բայց Աստված հավատարիմ է. նա ձեզ չի թողնի ձեր կարողությունից առավել փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք դիմանալ (Ա Կոր. 10.13) – դա խոստում է:

IV. ԱԶԱՏՄԱՆ ՀՈՒՅՍԸ:

THE HOPE OF DELIVERANCE.

ՀՈՍՎԵՓԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ ՄԵԶ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԴԱՍԵՐ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ:

<u>Իմ ոսկորներն</u> այստեղից հանե՛ք:

- *Հետաքրքիր համեմատություններ և հակադրություններ Քրիստոսի հետ - Հովսեփի մարմինը տեսավ քայքայում և նեխեց, բայց Քրիստոսի մարմինը չտեսավ ապականություն:*

- *Հովսեփի մարմինը հարյուրավոր տարիներ գերեզմանում էր: Հիսուսը մահացավ ուրբաթ ուշ կեսօրին, և Նա հարություն առավ կիրակի վաղ առավոտյան: Նա գերեզմանում է եղել ընդամենը մոտ 36 ժամ և ընդհանրապես չի քայքայվել:*

- *Հովսեփը մարգարեացավ իր թաղման մասին, իսկ Հիսուսի թաղման մասին մարգարեացավ Եսայա մարգարեն (Ես. 53.9):*

- *Հովսեփի մահը և նրա գերեզմանը հաստատեցին, որ բոլոր մարդիկ պետք է մահանան, բայց Հիսուսի դատարկ գերեզմանը հռչակում է, որ բոլոր մարդիկ կապրեն: (Ա Կորնթ. 15.20-22):*

- ***Հովսեփի ոսկորները նշանակալից են, բայց դրանք էական նշանակություն չունեին մարդու փրկության համար, իսկ մենք Քրիստոսի մարմնի անդամներն ենք, նրա մարմնից ու ոսկորներից:***

Եփեսացիներին 5.30, 32 – որովհետև նրա մարմնի անդամներն ենք, նրա մարմնից ու ոսկորներից: Այս խորհուրդը մեծ է, բայց ես Քրիստոսի և եկեղեցու մասին եմ ասում:

Հեսու 24.32 – Հովսեփի ոսկորները, որ Իսրայելի որդիները հանել էին Եգիպտոսից, թաղեցին Սյուքեմում՝ ագարակի այն մասում, որ Հակոբը գնել էր Սյուքեմի հոր՝ Եմորի որդիներից հարյուր կեսիթայով, և դա Հովսեփի որդիների ժառանգությունը եղավ:

ԱՄՓՈՓՈՒՄ.

Ինչպես Հովսեփը, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրը կարևոր է Աստծո արքայության համար: Մեզանից յուրաքանչյուրը պետք է օգտագործի իր տաղանդը(ները) Աստծո փառքի համար:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ